

# ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ 35



Այս համարում



**ԱՅՍՈՒՀԵՏ ԱՄԵՆ ՏԱՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ**



**ՀԱՆԴԻՊՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ ԺԱՄԱՆԱԾ ՊԱՐՈՆ ԺԱՆ-ԼՈՒԿ ՌՈՍԵՐՈՍԻՇԵԼԻ ՀԵՏ**

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ գրասենյակում տեղի ունեցավ հանդիպում Ֆրանսիայից ժամանած պարոն Ժան-Լուկ Ռոսերո-Միշելի հետ, որը հանդիսանում է ֆրանսիական ILE-DE-France առանց ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կազմակերպության հատուկ ներկայացուցիչը:



**ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԱՑԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ, ԶԵԿՈՒՅՑԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**

2018 թ.-ի հունիսի 28-ին ՀՀ-ում տեղի ունեցավ «խտրականության դեպքերի իրավիճակային դիտարկում» երկօրյա աշխատանքային հանդիպումը: Հանդիպմանը մասնակցում էին ԹՀԿ և ՉԼՄ ներկայացուցիչներ, փաստաբաններ, իրավապաշտպաններ և իրավաբաններ:



**ՁԻԱՀ-Ի ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ**

**ԱՊՐԻՐ ԿՅԱՆՔԴ ԴՈՉԻՏԻՎ, ԻՄԱՑԻՐ ՄԻԱՎ ԿԱՐԳԱԿԻՃԱԿԴ**

Դեկտեմբերի 1-ին ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվան նվիրված միջոցառումների շարքին միացավ նաև «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն: Ալցիայի մասնակիցները ունեցան պայծառ, դրական և խենթ լուսանկարներ, որոնք ներբեռնեցին կազմակերպության կայքէջից:



**ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԴԱՌՆԱ**

**ԱՎԵԼԻ ՀԱՍԱՆԵԼԻ, ԶԱՆ ԵՐԲԵՎԷ**

«2017 թվականի օգոստոսից՝ ՆԱՀԿ-ի շահառուներն արդեն իսկ հնարավորություն ունեն անվճար հետազոտություն անցնել կազմակերպության գրասենյակում, իսկ հիմա, դասընթացն անցած աուդիոների վերապատրաստման շնորհիվ, հնարավոր կլինի հետազոտություն անցնել իրենց հարմար վայրերում:



**ԻՐԱԿԱՆԱՑԱՎ MSMIT ԳՈՐԾԻՔԻ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ**

**ԵՐԵՔԱՆԳԱՄՅԱ ԴԱՐՆԹԱՑԸ**

2018 թվականին «Տղամարդկանց առողջության եվրասիական կոալիցիա» (ECOM) կողմից ֆինանսավորվող «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ իրականացավ MSMIT գործիքի խթանման համար երեքանգամյա դաընթացներ:



**LIFE 7**

**ԼԱՅՑ-7 ԱՐՏԱԳՆԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ**

2018 թվականի հոկտեմբերի 29-30-ին տեղի ունեցավ «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում իրականացվող ԼԱՅՑ-7 արտագնա տեղեկատվական հարթակը, որն այս անգամ նախատեսված էր միայն SUS սկսնակ ակտիվիստների համար:

*Ժամանակին Համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:*



«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի (ՆՍՀԿ) և «Բավարիայի երիտասարդական խորհուրդ»-ի (ԲԵԽ) համագործակցության շնորհիվ 2019թ-ից սկսած Հայաստանի և Գերմանիայի երիտասարդները հնարավորություն կունենան մասնակցելու փոխանակման ծրագրերի և վերապատրաստվելու, որպես երիտասարդական աշխատող, - ասում է ՆՍՀԿ-ի նախագահ Սերգեյ Գաբրիելյանը, որը գլխավորում էր կազմակերպության «Բավարիայի երիտասարդական խորհուրդ»-ի տարեկան ժողովին մասնակցելու նպատակով Գերմանիայի Դաշնային Հանրապետություն մեկնած պատվիրակությունը: Այցի գլխավոր նպատակը ՆՍՀԿ-ի և ԲԵԽ-ի նախագահների կողմից երիտասարդների և երիտասարդական ՔՀԿ-ների փորձի փոխանակման և զարգացման վերաբերյալ չուշագրի ստորագրումն էր:



**ԱՅՍՈՒՀԵՏ ԱՄԵՆ ՏԱՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱԼ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ. ՍԵՐԳԵՅ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**



«Մրցութային կարգով ընտրված երիտասարդները կմասնակցեն համապատասխան դասընթացների, կծանոթանան Գերմանիայում գործող երիտասարդական հիմնախնդիրներով զբաղվող կառույցների գործունեությանը:

Այս ամենը կզուգորդվի մշակութային-ճանաչողական այցերով ինչպես Հայաստանի այնպես էլ Գերմանիայի վերաբերյալ ամբողջական պատկեր կազմելու նպատակով,- ասում է Սերգեյ Գաբրիելյանը:

«Այցի շրջանակներում այցելեցինք նաև ԲԵԽ-ի մյուսնիսենյան գրասենյակ, ինչպես նաև հանդիպումներ ունեցանք վերջինիս կազմում գործող մի շարք երիտասարդական կազմակերպությունների հետ», - հավելում է ՆՍՀԿ-ի իրավաբան Անահիտ Մկրտչյանը՝ ընդգծելով, որ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի ներկայացուցիչների համար այցի շրջանակներում կազմակերպվեցին նաև բազմաթիվ մշակութային-ճանաչողական այցեր, որոնցից էին՝ թագավոր Լյուդվիգ 2-րդի ամրոցը (Նոյշվանշտայն) և Դախաոյում գտնվող հիտլերյան համակենտրոնացման ճամբարը, որտեղ պահվել և սպանվել են մարդիկ՝ ելևելով նրանց ազգային կամ կրոնական պատկանելությունից, սոցիալական կարգավիճակից, սեռական կողմնորոշումից և այլ հատկանիշներից:

*Հոկտեմբերի 17-24-ը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի ներկայացուցիչների այցը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն կատարվել է Բավարիայի երիտասարդական խորհրդի ֆինանսական աջակցությամբ:*

**ԼԱՅՖ-7 արտագնա տեղեկատվական հարթակ**



2018 թվականի հոկտեմբերի 29-30-ին տեղի ունեցավ «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում իրականացվող ԼԱՅՖ-7 արտագնա տեղեկատվական հարթակը, որն այս անգամ նախատեսված էր միայն SUS սկսնակ ակտիվիստների համար:

ԼԱՅՖ-7 արտագնա տեղեկատվական հարթակի նպատակն է SUS համայնքի ներկայացուցիչների շրջանում բարձրացնել սեռականության և առողջության իրավունքի վերաբերյալ գիտելիքների մակարդակը, նպաստել իրավագիտակցության



բարձրացմանը, ծանոթացնել իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմներին, ինչպես նաև նպաստել համայնքների ներգրավվածությանը ՄԻԱՎ-ին հակազդման ազգային մարմիններում:

Առաջին օրը սեռականության փորձագետ Ալիկ Ուստյանը հանգամանալից ներկայացրեց «Սեռականություն» թեման: Մասնակիցները մեծ ոգևորությամբ ընդունեցին թեման, բազմաթիվ հարցեր հնչեցին, որոնք ստացան իրենց գրիտ պատասխանները հենց փորձագետից: Արտագնա տեղեկատվական հարթակի երկրորդ օրը ՆՍՀԿ իրավաբան, «Առողջության իրավունք» ծրագրի Իրավական խոչընդոտների հաղթահարման մասնագետ Անահիտ Մկրտչյանը ներկայացրեց պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման, ինչպես նաև ՀՀ բժշկական հիմնարկներում բժշկական անձնակազմի ցածր իրավագիտակցության և LQFS+ անձանց առնչվող բժշկական գիտելիքների ցածր մակարդակին, բժշկական անձնակազմի կողմից դրսևորվող խտրական վերաբերմունքին և խտրականության հաղթահարման մեխանիզմներին առնչվող իրավական կարգավորումները: Ինչպես նաև ներկայացվեց ՄԻԱՎ-ով ապրող անձանց առնչվող իրավունքներն ու պարտավորությունները: Հանդիպման ողջ ընթացքն ուղեկցվում էր տեսահոլովակների դիտմամբ և գործնական աշխատանքներով, կարծիքների փոխանակմամբ, հարցուպատասխանով, ինչը նպաստեց դասընթացի կիրառական նպատակների իրագործմանը: ԼԱՅՖ-7 արտագնա տեղեկատվական հարթակի ավարտին մասնակիցներին հանձնվեցին վկայագրեր:



**ԻՐԱՎԱՆԱՅԱՎ MSMIT ԳՈՐԾԻՔԻ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԵՐԵՔԱՆԳԱՄՅԱ ԴԱՍԸՆԹԱՅԸ**

2018 թվականին «Տղամարդկանց առողջության եվրասիական կոալիցիա» (ECOM) կողմից ֆինանսավորվող «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ իրականացավ MSMIT գործիքի խթանման համար երեքանգամյա դաընթացներ: Դասընթացի նպատակն է MSMIT գործիքի կիրառումը որպես երկրում SUS անձանց համար համապատասխան ծառայությունների փաթեթի ձեռնարկ: Այս գործիքը նախատեսված է առողջապահական հիմնարկների

աշխատակիցների, ՄԻԱՎ-ի և սեռավարակների ոլորտում ծրագրերի ղեկավարների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, համայնքային և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար: Առաջին հանդիպումը տեղի ունեցավ 2018 թվականի հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 2-ը ՀՀ-ի ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելման ոլորտների ՀԿ ներկայացուցիչների մասնակցությամբ, որի ընթացքում միջազգային

փորձագետ Սվյատոսլավ Շերեմեդը մասնակիցներին ներկայացրեց MSMIT գործիքի Էությունն ու նրա կիրառման կարևորությունը: Այնուհետև մասնակիցների հետ համատեղ, կարծիքների փոխանակման շնորհիվ կազմվեց «Ծառայությունների հիմնական և ընդլայնված փաթեթ», որը իր մեջ ներառում է ՄԻԱՎ-ի արդյունավետ կանխարգելման համար SUS անձանց համար նախատեսված բոլոր հնարավոր ծառայությունները:



Երկրորդ հանդիպման ժամանակ, 2018 թվականի նոյեմբերի 5-ին, «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ (ՆՍՀԿ) գրասենյակում Ս. Շերեմետին ու ՆՍՀԿ-ի աշխատակիցները վերանայեցին, մանրամասնեցին ու վերջնականացրին «Ծառայությունների հիմնական և ընդլայնված փաթեթ»-ը:

Երրորդ օրը, 2018 թվականի նոյեմբերի 6-ի հանդիպումը տեղի ունեցավ ՀՀ ՄՀՀ-ի, ՀՀ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի և Առողջապահության Նախարարության ներկայացուցիչների հետ, որի ժամանակ Ս. Շերեմետը ներկայացուցիչներին նույնպես ներկայացրեց MSMIT գործիքի Էությունն ու կիրառման կարևորությունը: Այնուհետև «Առողջության Իրավունք» ծրագրի համակարգող Ալիկ Ուստյանը ներկայացրեց մշակված «Ծառայությունների հիմնական և ընդլայնված փաթեթ»-ը, որի ընթացքում եղան բազմաթիվ առաջարկներ, որոնք ընդգրկվեցին վերը նշված փաթեթում:

«Ծառայությունների հիմնական և ընդլայնված փաթեթ»-ը նախատեսվում է որպես շահերի պաշտպանության գործիք ներդնել ՄԻԱՎ-ի հակազդման ազգային ծրագրում:

*Սույն դասընթացը կազմակերպվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող «Առողջության Իրավունք» ծրագրի շրջանակներում՝ Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի (ECOM) որը ֆինանսական և տեխնիկական աջակցությամբ ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերի հաշվին:*



LGBTnews.am-ը «Նոր սերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպության տնօրեն Արման Սահակյանի հետ գրուցել է Հայաստանում ԼԳԲՏ քրիստոնյաների՝ այսօր չեղարկված ֆորումի, ինչպես նաև երկրում ԼԳԲՏի մարդկանց իրավունքների վիճակի վերաբերյալ:

- Ոստիկանապետ Օսիայանի երեկվա հայտարարությունից հետո ձեր կազմակերպությունը հանրությանը հայտնեց, որ ստիպված է չեղարկել ԼԳԲՏ քրիստոնյաների ֆորումը, որ պետք է տեղի ունենար նոյեմբերին Հայաստանում: Ես ճիշտ եմ հիշում, որ ֆորումի անցկացման մտադրության մասին դուք մեղիայով հայտնել էիք դեռևս մինչ իշխանափոխությունը:

- Դեռևս մինչ հեղափոխությունը հարցազրույց էր եղել, որի մասին նյութ էր պատրաստել ռուսական կայքերից մեկը: Այն մասին էր, որ ԼԳԲՏ քրիստոնյաների ֆորումը, Այդ մարդիկ սովորական քրիստոնյա մարդիկ են, որ հետևելով աստվածաշնչյան պատվիրաններին, փորձում են ընդամենը բոլոր մարդկանց նկատմամբ սեր և հանդուրժողականություն տարածել՝ ընկալելով Աստվածաշունչն այնպես, ինչպես այն կա՝ ոչ թե որպես ատելության, այլ սիրո և համերաշխության գիրք: Այդ միջոցառման խնդիրը բացարձակ չի եղել Աստվածաշնչի խմբագրումը կամ ներքաղաքական գործընթացներին խառնվելը, հրապարակային միջոցառումները, ինչպես հետագայում խեղաթյուրվեց և պրոպագանդվեց հատուկ ուղղորդված տարբեր խմբերի ու մեղիայի կողմից:

**ՀԱՂԹՈՂ ԵՎ ՊԱՐՏՎՈՂ ԿՈՂՄԵՐ ԶԿԱԼ, ՊԱՐՏՎԵՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՆՂՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.**

Ֆորումի ընթացքում հրապարակային միջոցառումների անցկացում նախատեսված չի եղել, հատուկ խնդիր էլ դրված չի եղել որա անցկացման մասին իրազեկելու հանրությանը, ընդամենը հարցազրույցի ընթացքում խոսվել է նաև այդ մասին: Մտածում էինք՝ իրեն քրիստոնեական առաջին պետություն հռչակած Հայաստանը սիրով և համերաշխությամբ կհյուրընկալի այլ երկրներից ժամանող քրիստոնյա մարդկանց, նրանք կտեսնեն Հայաստանը, երկիրը ավելի ճանաչելի կլինի, ինչու է՝ նաև տուրիզմի առումով:

- **Դեռևս իշխանափոխությունից առաջ հայտարարված ֆորումը մի ինչ-որ պահից սկսած հանկարծ դարձավ ակտիվ թիրախ: Ինչո՞ւ հանկարծ այդպես եղավ:**

- Եթե ժամանակագրությանը նայենք, ապա կտեսնենք, որ ուղղորդված խմբերն իրենց հարձակումը սկսեցին քաղաքական այն լարված ժամանակահատվածում, երբ ակտիվորեն սկսվեց քննարկվել խորհրդարանը ցրելու գաղափարը, որը արագորեն վերածվեց հեղափոխական կառավարության և հին Ազգային ժողովի հակամարտության:

Այդ թեժ քաղաքական իրավիճակում կազմակերպված այս արշավից ակնհայտ էր, որ ուղղորդվող խմբերի, հետադիմական խմբակների շարժառիթը ներքաղաքական է. ինչպես նախկինում բազմիցս՝ հերթական անգամ ԼԳԲՏԻ մարդկանց իրավունքների հարցը շահարկումների ու պրովոկացիաների առիթ փորձեցին դարձնել: Ատելության այդ արշավի առաջին դիրքերում էին հանրային դեմքեր, գործող ու նախկին պատգամավորներ, ինչ-որ կազմակերպություններ, անհատներ, որոնք սոցցանցերում, նաև ֆեյքերով ու էջերով, մամուլի միջոցներով, ասուլիսների ու անգամ թռուցիկների միջոցով ատելություն և ապատեղեկատվություն էին տարածում:

Գրում էին՝ իբր գեյ շքերթ է կազմակերպվելու, ապատեղեկատվություն տարածվեց մասնակիցների քանակի մասին՝ իրական 50-ի փոխարեն ներկայացնում էին սկզբում 1500, ապա՝ 2000, իսկ հետո նաև 3000, ասում էին՝ իբր հավաքվում ենք՝ խմբագրելու Աստվածաշունչը, քանդելու հայկական ընտանիքը, եկեղեցին, պետությունը և այլ ստահող բաներ: Ապա ցույց արին, հավաքվեցին մի քանի տասնյակ հոգով, ատելության քարոզչություն արին, տեսան, որ մարսվեց՝ անցան բացահայտ սպառնալիքների. ԲՀԿ-ական պատգամավոր Գևորգ Պետրոսյանը Հայաստանի քաղաքացիներին երկրից վնդդելու կոչեր արեց, նախկին պատգամավոր Արագած Ախոյանը ասուլիսի ժամանակ «սատկացնելուց» խոսեց, իսկ հարցազրույցներից մեկում սպառնաց ընդհուպ մինչև բռնություն կիրառել, և այս ամենին իրավապահները որևէ համարժեք արձագանք չտվին, թեև մենք նաև դիմել էնք ոստիկանություն:

- **Ուզում եմ հիշենք, որ կոնտեքստը ավելի լայն էր. իշխանափոխությունից անմիջապես հետո ԼԳԲՏԻ մարդկանց իրավունքների թեման դարձավ շահարկումների թեմա ոչ միայն ԼԳԲՏ քրիստոնյաների ֆորումի շրջանակներում. Շուռնուկի պրովոկացիան, երբ ՀՀԿ-ի հետ կապակցված մարդիկ գյուղացիներին լարեցին գյուղում հյուրընկալված ակտիվիստների հանդեպ, ապա տարատեսակ այլ խժոժություններ, որ փորձեցին կազմակերպել, սևեռվեցին ԼԳԲՏ քրիստոնյաների ֆորումի վրա, Շարմազանովն ու Ուրիխանյանը հոմոֆոբ օրինագծեր ներկայացրին ԱԺ...**

- Այո՛, և այդ ողջ պրովոկատիվ արշավի արդյունքն այն էր, որ հանրության մի մասը սկսեց հավատալ, թե ԼԳԲՏԻ մարդիկ հասարակության և պետության համար ամենամեծ չարիքն են՝ մոռանալով կոռուպցիայի, նախորդ իշխանությունների հանցանքների և այլնի մասին, որ պետությանը ու հասարակությանը իրոք վնասող բաներն են: Սա արվեց՝ հանրությանը շեղելու համար իրական քաղաքական օրակարգից:

- **Իշխանությունն, ի դեմս Նիկոլ Փաշինյանի, այս ամենին արձագանքեց Ազգային ժողովում և հաջորդ օրը կառավարությունում ելույթով...**

- Նիկոլ Փաշինյանը ԼԳԲՏԻ մարդկանց փաստացի չդիտարկեց իբրև անքակտելի իրավունքներ ու ազատություններ ունեցող լիարժեք քաղաքացիներ, այլ ներկայացրեց որպես մի զանգված, որը գլխացավանք է, պրոբլեմ է, որի հետ ինչ-որ մի բան է պետք անել, ինչ-որ կերպ վարվել, և հարցեր ձևակերպելով հիստորիան նացիստական փիլիսոփայության տրամաբանությամբ՝ առաջարկեց մտածել՝ վառել՞ այդ մարդկանց, բանտե՞ր նետել սովետական օրենսդրության տրամաբանությամբ, տանկե՞ր քշել, մի կերպ հանդուրժե՞լ:

Նորանկախ Հայաստանում Նիկոլ Փաշինյանն ամենաբարձրաստիճան պաշտոնյաներից առաջինն է, որ հրապարակավ անդրադարձել է ԼԳԲՏԻ մարդկանց, և ահա այսպես է անդրադարձել՝ մոռանալով, որ յուրաքանչյուր մարդ բարձրագույն արժեք է: Նա ԼԳԲՏԻ մարդկանց չդիտարկեց իբրև մյուս քաղաքացիների պես հավասար իրավունքներ ու ազատություններ ունեցող մարդիկ և չանդրադարձավ այն դիտանկյունից, որ այդ մարդիկ ունեն սուր խնդիրներ, որոնց պետք է տալ լուծումներ, այլ անդրադարձավ այն դիտանկյունից, թե՛ լավ, ի՞նչ անել գլխացավանք դարձած այս զանգվածի հետ: Այսինքն՝ ինչ-որ «իրենք» պիտի նստեն ու որոշեն, թե ի՞նչ անել մի խումբ մարդկանց հետ, ինչեղված լուծումների տարբերակներն էլ՝ ուղղակի ապշեցուցիչ:

- Փաստորեն ի՞նչ է ստացվում. ինչ-որ խմբեր, հետապնդելով ինչ-որ շահեր, կազմակերպում են հետևողական հոմոֆոբ արշավներ, այդ ողջ ընթացքում ԼԳԲՏԻ համայնքը, հականալով նրանց մտադրությունները, հետևողական չի տրվում սադրանքների, չի արձագանքում այդ արշավին, իսկ իրավապահ համակարգը համառորեն անտեսում է հակաիրավական կոչերն ու գործողությունները, պետության թիվ մեկ դեմքի արձագանքն էլ այս ամենին այնպիսին է, ինչպես նկարագրեցիք, և իրավապահների անգործությունն ու Փաշինյանի ելույթն, ըստ էության, կանաչ լույս չէ՞ր սադրիչների համար: Փաշինյանի ելույթից հետո նրանք արդեն անթաքույց սկսեցին մեքենաներով հետևել ձեր կազմակերպության անդամներին, և դուք ստիպված եղաք հայտարարելու, որ կազմակերպությունը ժամանակավորապես դադարեցնում է իր ակտիվ գործունեությունը...

-Մենք բազմիցս նամակներ ենք հղել ՀՀ կառավարությանն՝ ի դեմս Նիկոլ Փաշինյանի, տեղեկացրել ենք, որ Հայաստանում ծրագրվում է անցկացնել ԼԳԲՏ քրիստոնյաների ֆորում, որ այդ ֆորումը փակ, ոչ հրապարակային միջոցառում է, որի ընթացքում նախատեսված չեն հանրային գործողություններ, բայց մեր բոլոր նամակները մնացել են անարձագանք: Եվ ահա, երեկ ոստիկանապետ Օսիայանի խայտառակ հայտարարությունն է հնչում, թե ֆորումը նպատակահարմար չէ անցկացնել, Հայաստանում այն տեղի չի ունենալու, ընդ որում անվտանգության ռիսկերը ներկայացվում են որպես հավելյալ, ոչ թե հիմնական փաստարկ:

**-Սերն ու համերաշխությունն, այսպիսով, ընտրողական է և խտրական...**

-Այդպես է ստացվում: Եվ գիտե՞ք ինչն է հետաքրքիր. փորձ է արվում ներկայացնելու՝ իբր այդ հոմոֆոբ խմբերը հաղթեցին, իսկ մենք՝ պարտվեցինք: Իրականում պարտվեց Հայաստանի Հանրապետությունը, ժողովրդավարությունը, իրավունքի գերակայությունը, գրանցվեց հետընթաց ժողովրդավարությանը հասնելու ճանապարհին: Բայց ուզում եմ շեշտել, որ այդ հետընթացը ժամանակավոր է, սերը, հանդուրժողականությունը, ազատությունը, հավասարությունը այլընտրանք չունեն և վաղ թե ուշ հաղթանակելու են: Տեղի ունեցածի վերլուծության, փաստերի արձանագրման արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ դեռևս շատ անելիքներ կան իրական ժողովրդավարություն հաստատելու և բոլորի համար հավասարություն ապահովելու ուղղությամբ:

**-Անելիքների մասին. երկարաժամկետ առումով ի՞նչ գործողություններ եք նախատեսում իրականացնել այդ ուղղությամբ:**

-Նախ և առաջ հասարակության հետ աշխատանքը՝ իրավագիտակցության ամրապնդման, տեղեկատվության տրամադրման, սահմանադրական իրավունքներին ծանոթացնելու ուղղությամբ, երկրորդ՝ հակաիրավական երևույթների փաստագրումը և դատաիրավական համակարգին, ինչպես նաև միջազգային գործընկերներին դրանց հետևողական ներկայացումը, դատական նախադեպերի ուղղությամբ աշխատանքը, երրորդ՝ իշխանության տարբեր օղակների հետ ԼԳԲՏԻ մարդկանց իրավունքների վերաբերյալ օրակարգի քննարկումը, չորրորդ՝ մեդիայի հետ աշխատանքը և այլն:

**-Ձեր կազմակերպությունը գործունեությունը ժամանակավորապես դադարեցրել էր: Այժմ արդեն վերսկսե՞լ եք:**

-Մենք մեր գործունեությունը շարունակելու ենք բնականոն հունով, աշխատելու ենք բոլոր նշված ուղղություններով և վստահ ենք, որ հասնելու ենք իրապես ազատ, ժողովրդավար, հավասար, արդար պետություն ու հասարակություն ունենալուն:





ՄԻԱՎ-ը ժամանակին ախտորոշելու դեպքում լիովին վերահսկելի է, այնինչ մինչ օրս ՄԻԱՎ-ը՝ Մարդու իմունային անբավարարության վիրուսը, շատերը նույնացնում են ՁԻԱՀ-ի՝ Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի հետ և ախտորոշումը համարում մահվան դատավճիռ: Իրականում ՁԻԱՀ-ը ՄԻԱՎ-ի վերջնային փուլն է: ՄԻԱՎ-ի վերաբերյալ պարբերաբար հետազոտվելը կօգնի ժամանակին հայտնաբերել և վերահսկել այն: «Շուտով ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը կդառնա ավելի հասանելի, քան երբևէ», - ասում է ՆԱՀԿ-ի աշխատակից Արման Սահակյանը, որը մասնակցում էր «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում» կազմակերպված ՄԻԱՎ-ի թեստավորման և կանխարգելման սեմինար-վարժանքին:

**ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԿԴԱՌՆԱ ԱՎԵԼԻ ՀԱՍԱՆԵԼԻ, ՔԱՆ ԵՐԲԵՎԷ**

«2017 թվականի օգոստոսից ՆԱՀԿ-ի շահառուներն արդեն իսկ հնարավորություն ունեն անվճար հետազոտություն անցնել կազմակերպության գրասենյակում, իսկ հիմա, դասընթացն անցած աուլթրիչների վերապատրաստման շնորհիվ, հնարավոր կլինի հետազոտություն անցնել իրենց հարմար վայրերում: Սա ենթադրում է, որ որպես խորհրդատու վերապատրաստված աուլթրիչ աշխատակիցը կարող է հետազոտություն իրականացնել ինչպես շահառուի տանը, այնպես էլ այն վայրերում, որտեղ հնարավոր է ապահովել հետազոտության իրականացման համար անհրաժեշտ նախապայմանները՝ ջերմաստիճան, լուսավորություն, գաղտնիության ապահովում և այլն»:

Երկօրյա դասընթացը կարևորվում է նրանով, որ անմիջականորեն թիրախային խմբերի հետ աշխատող անձինք, այս դեպքում՝ աուլթրիչ աշխատակիցներն ամրապնդեցին ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրենց գիտելիքների պաշարներն ու ձեռք բերեցին համապատասխան մասնագիտական հմտություններ՝ իրենց իսկ շահառուների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցկացնելու համար: Սա իր հերթին հնարավորություն է ստեղծում այս հետազոտությունը դարձնել առավել հասանելի այն խմբերի համար, որոնց հետ աշխատում է կազմակերպությունը:

*Սեմինար-վարժանքն իրականացվում է ՆԱՀԿ-ի նախաձեռնությամբ՝ ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գյոթբալ Հիմնադրամի և Էլթոն Ձոնի ՁԻԱՀ-ի դեմ պայքարի հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղղված ծրագրի երի աշխատակիցների համար, որին աջակցել է ՀՀ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնը:*



**ԵՌՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔ ՀԱՆՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ**

2018 թվականի նոյեմբերի 22-24-ը տեղի ունեցավ ՀՀ համայնքապետարանների և զբաղվածության տարածքային կենտրոնների ներկայացուցիչների համար նախատեսված «Խտրականության արգելք հանուն ժողովրդավար հասարակության» եռօրյա դասընթացը «ԼԳԲՏԻ անձանց իրավունքների խթանում հայաստանյան հասարակությունում» ծրագրի շրջանակներում:

Դասընթացի առաջին օրվա թեման էր «Խարանի և խտրականության կանխարգելումը», որի շրջանակներում դասընթացավար Անահիտ Մկրտչյանը ներկայացրեց «Խտրականության արգելքը միջազգային և ներպետական իրավական փաստաթղթերում», «Խտրականության կատեգորիաները, որոշակի հատկանիշներ», Խտրականության դեմ իրավունքում ապացուցողական հարցերը»,

«խտրականության դրսևորումը բռնության միջոցով» թեմաները: Դասընթացի երկրորդ օրվա «խոսքի ազատություն- ատելության խոսք» թեմայի շրջանակներում ներկայացվեց և քննարկվեց, թե « Ի՞նչ է խոսքի ազատությունը: Ի՞նչ է ատելության խոսքը: Ինչպե՞ս տարբերել խոսքի ազատության իրացումն ատելության խոսքից», «Ատելության խոսքի համար պատասխանատվության գործող մեխանիզմները», «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա ազատությունների ու իրավունքների անքակտելի հիմք», «Վիրավորանք և զրպարտություն», «Ատելության խոսքն առցանց տիրույթում»:

Դասընթացի երրորդ օրվա թեման էր «Մարդու իրավունքներ»-ը, որի շրջանակներում փորձագետ Անահիտ Զիլինգարյանը ներկայացրեց «Մարդու իրավունքների հասկացությունը, ծագումն ու սերունդները», «Մարդու իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմները», «Տեղական ինքնակառավարման մարմինների դերը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում» թեմաները:

**Դասընթացին ներկայացվող բոլոր նյութերն ուղեկցվեցին տեսահոլովակների դիտումներով և ինտերակտիվ վարժանքներով, որոնց միջոցով մասնակիցներն առավել ոյուրին ընկալեցին մատուցվող թեման:**

**ՀԱՆԴԻՊՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ ԺԱՄԱՆԱԾ ՊԱՐՈՆ ԺԱՆ-ԼՈՒԿ ՌՈՍԵՐՈՒՄԻՇԵԼԻ ՀԵՏ**

2018 թվականի նոյեմբերի 19-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ գրասենյակում տեղի ունեցավ հանդիպում Ֆրանսիայից ժամանած պարոն Ժան-Լուկ Ռոմերո-Միշելի հետ, որը հանդիսանում է Ֆրանսիական ILE-DE-France առանց ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կազմակերպության հատուկ ներկայացուցիչը: Հանդիպման ընթացքում խոսվեց 2 կազմակերպությունների գործունեության, Հայաստանում ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի իրավիճակի, խոցելի խմբերի ՄԻԱՎ-ի ծառայությունների հասանելիության, ինչպես նաև վերջին շրջանում ԼԳԲՏ անձանց և նրանց հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների հանդեպ ատելության և անհանդուրժողականության աճի, դրանց պատճառների և հնարավոր լուծումների մասին: Հանդիպման ավարտին կողմերը երկուստեք եկան փոխադարձ արդյունավետ համագործակցության համաձայնության:



**ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ, ՉԵԿՈՒՅՑԻ ՆԵՐԿԱՅՎՑՈՒՄ**

2018 թ.-ի հունիսի 28-ին ՀՀ-ում տեղի ունեցավ «խտրականության դեպքերի իրավիճակային դիտարկում» երկօրյա աշխատանքային հանդիպումը, որի շրջանակներում Չեխիայում գործող Պոռնադնա (Poradna pro občanství, občanská a lidská práva) կազմակերպության ներկայացուցիչները ներկայացրին «խտրականության դեպքերի իրավիճակային դիտարկման» մեթոդը և դրա կիրառման ձևերը, Մարդու իրավունքների պաշտպանի դերը, ԼԳԲՏ համայնքի իրավիճակը Չեխիայում: Հանդիպմանը մասնակցում էին ԶՀԿ և ՉԼՄ ներկայացուցիչներ, փաստաբաններ, իրավապաշտպաններ և իրավաբաններ: Արդյունքում հանդիպման 5 մասնակից 2018թ.-ի սեպտեմբերի 23-ին մեկնեց Չեխիայի Հանրապետություն՝ ուսումնասիրելու Չեխիայում մարդու իրավունքների, խտրականության և ատելության դեմ պայքարում ներգրավված ԶՀԿ-ների և ՄԻՊ-ի աշխատանքը և կատարելու խտրականության դեպքերի փաստագրում:



Դիտարկված չեխական փորձի հիման վրա «Ինչպես գտնել ուղին» ծրագրի շրջանակներում ՆՍՀԿ-ն ձեռնարկեց իրավիճակային թեստավորումը Հայաստանում ներդնելու փորձ:

«Նոր սերունդ» ՀԿ-ն խտրականության դեպքերի փաստագրում արեց Հայաստանում LQFS անձանց շրջանում և Նոյեմբերի 28-ին ներկայացրեց «խտրականության դեպքերի փաստագրում» 2018թ. զեկույցի տվյալները, որը արտացոլում է Հայաստանի Հանրապետությունում առկա խտրականության դրսևորման բարձր ցուցանիշը՝ կապված մարդու սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հետ: Կլոր սեղան- քննարկմանը մասնակցում էին ոլորտային ՀԿ-եր, իրավապաշտպաններ, իրավաբաններ և փաստաբաններ, ՄԻՊ-ի ներկայացուցիչը, ինչպես նաև չեխական կազմակերպության մեր գործընկերները:



Բոլորը կարևորեցին Նոր մեթոդների կիրառումը մեր իրականության մեջ: ՄԻՊ-ի ներկայացուցիչը նշեց, որ կարևորում են քաղաքացիական հասարակության հետ սերտ համագործակցությունը և հույս հայտնեց նմանատիպ Նոր քննարկումների ու հանդիպումների:

Հանդիպումը անցավ ազատ հարց ու պատասխանի և քննարկումների մթնոլորտում: Քննարկումից հետո ՆՍՀԿ փաստաբան Անահիտ Մկրտչյանը, ծրագրերի համակարգող և իրավապաշտպան Հմայակ Ավետիսյանը, Պորադևա կազմակերպության Նախագահ Միրոսլավ Դվորակը և իրավաբան Ֆրանտիշեկ Վալեշը մամուլի ասուլիս տվեցին, որի ընթացքում լրագրողներին պատմեցին իրավիճակային թեստավորման եղությունը, իրականացրած զեկույցի արդյունքները:

**ՔՆՆԱՐԿՈՒՄ` ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏՍՏ ԵՎ ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ԱՌՆՉՎՈՂ ՄԻԱՎ-Ի ԿԱՆԱԿՐԳԵԼՄԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

2018 թ. -ի դեկտեմբերի 11-ին երևանում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում կայացավ կլոր սեղան քննարկում Հայաստանում ՏՍՏ և տրանս անձանց առնչվող ՄԻԱՎ-ի կանխարգելման ոլորտում բարելավման նպատակներով իրականացված զեկույցների մասին:

Բացման խոսքով ներկայացավ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ Նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Արման Սահակյանը՝ շնորհավորելով բոլոր մասնակիցներին Մարդու իրավունքների պաշտպանության օրվա առթիվ: Նրան հաջորդեց Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան պետական բաժնի արտաքին ծառայության պաշտոնյա Սոմեր Բեսիր-Բրայերսի բացման խոսքը:





Քննարկմանը ներկա էին նաև միջազգային կառույցներ, նախարարություններ և դիվանագիտական մարմիններ, տեղի կազմակերպությունների ներկայացուցիչներ, ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի ներկայացուցիչներ և այլք: Կլոր սեղան քննարկման օրակարգը ամփոփիչ զեկույցների ներկայացում էր՝ 2018թ -ին կատարած աշխատաքների և հետազոտությունների վերաբերյալ: Առաջինը իր զեկույցով հանդես եկավ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի իրավաբան-փաստաբան Անահիտ Մկրտչյանը «Գեյ, SUS և Տրանս անձանց իրավունքների խախտման» ազգային զեկույցով և ներկայացրեց «ԼԳԲՏ և ՄԻԱԿ-ով ապրող անձանց իրավունքների վերաբերյալ ազգային օրենսդրության վերլուծությունը»:

Նա խոսեց խտրականության, սահմանդրության մեջ տեղ գտած սխալ տերմինալոգիայի, դրանք ուղղելու, փոփոխելու ապագա ու ներկայիս ծրագրերի մասին :

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի ծրագրերի համակարգող, IBBS 2018-ի բացերի գնահատման փորձագետ Հմայակ Ավետիսյանը ներկայացրեց «ՄԻԱԿ-ի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային (IBBS) 2018 թվականի հետազոտությունների բացերի գնահատման վերաբերյալ ակտերնատիվ զեկույցը: Հնչեցին տարբեր կարծիքներ և առաջարկներ հաջորդ երկու տարիների ընթացքում դրանք շտկելու, ուղղելու, բարելավելու համար և պատրաստվելու 2020թ-ին կայանալիք IBBS հետազոտությանը:

Բյուջետավորման փորձագետ Ահարոն Բարսեղյանը ներկայացրեց «Ֆինանսական բացերի ազգային գնահատում»-ը, ՀՀ ում SUS և տրանս անձանց համար ՄԻԱԿ-ին առնչվող ծառայություններին ուղղված ծրագրերի համար նախատեսված ֆինանսավորումը, սպառումն ու պահանջարկը:

*«Առողջության իրավունք» ծրագիրն իրականացվում է «Տղամարդկանց առողջության եվրասիական կոալիցիայի» (ECOM) ֆինանսական աջակցությամբ, ՄԻԱԿ-ի և ՁԻԱՀ-ի, մալարիայի և տուբերկուլոզի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի ֆոնդերի հաշվին*



# Ապրիր կյանքդ պոզիտիվ, իմացիր ՄԻԱՎ կարգավիճակդ

Դեկտեմբերի 1-ին՝ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվան նվիրված միջոցառումների շարքին միացավ նաև «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն:

Ամբողջ օրվա ընթացքում Հյուսիսային պողոտայում տեղադրված էր ՁԻԱՀ-ի դեմ պայքարի պաստառը, որի վրա գրված էր այս տարվա կարգախոսը՝ **Ապրիր կյանքդ պոզիտիվ, իմացիր ՄԻԱՎ կարգավիճակդ:**

Բոլոր նրանք, ովքեր ցանկացան համերաշխություն հայտնել ՁԻԱՀ-ի դեմ պայքարին, լուսանկարվեցին պաստառի մոտ: Արդյունքում ակցիայի մասնակիցները ունեցան պայծառ, դրական և խենթ լուսանկարներ, որոնք կարողացան ներբեռնել կազմակերպության կայքէջից:



*Ակցիային մասնակցած մասնակիցների լուսանկարներից մի քանիսը...*